

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՎԵՃ

Ա. Շ. ՇԱՀԻՆՅԱՆ

«ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 260 ՏԱՐՈՒՄ»
ԳՐՔԻ ԱՌԹՅՎ

Հայկական ՍՍՌ ակադեմիային կից Հայկական Աշխարհագրական Ընկերության կողմից 1957 թ. վերջերին հրատարակված ընկ. Հովհաննես Ստեփանյանի «Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում» գիրքը մի կարևոր աշխատություն է, որի կարիքը վաղուց զգացվում էր:

Հեղինակը միանգամայն ճիշտ է նկատում, երբ գրում է. «Քարտեզագրական հրատարակությունների նշանակությունը ժողովրդական տնտեսության զարգացման, երկրի կառավարման ու պաշտպանության, գիտությունների առաջադիմության, մասսաների լուսավորության, ինչպես և ընդհանրապես մարդկային կուլտուրայի համար ակնհայտնի է»:

Ընկ. Ստեփանյանը իր աշխատությունը կազմելիս օգտագործել է Հայկական, Վրացական, Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիաների, համալսարանների, աշխարհագրական ընկերությունների, հանրային գրադարանների և այլ հիմնարկների արխիվային նյութերը՝ իր առաջ դրված խնդիրը հաջողությամբ լուծելու համար: Նա կատարել է մանրակրկիտ աշխատանք և հավաքել է հարուստ նյութ:

Աշխատությունը բաղկացած է չորս մասից: Առաջին մասում հեղինակը անում է ընդհանուր գիտությունների հայ քարտեզագրական հրատարակությունների մասին, տալով նրանց հիմնական ժամանակագրական շրջանները, քարտեզագրական աշխատանքների զարգացումը՝ կախված հասարակական կարգերից, աշխարհագրական գիտության զարգացման աստիճանից, շոշափելով նաև քարտեզագրության վերաբերյալ մասնագիտական այլ հարցեր: Երկրորդ մասում ներկայացված է հայ քարտեզագրական հրատարակությունների ցուցակը 1695 թ. մինչև 1955 թ., որը հանդիսանում է աշխատության ամենակարևոր բաժինը: Այս բաժնի երեք հիմնական մասերում քննության են առնված այն քարտեզները, գլոբուսները և ատլասները, որոնք տպագրվել են ա) մինչև սովետական շրջանը օտար պետություններում, բ) ցարական Ռուսաստանում և գ) Սովետական ժամանակաշրջանում, այսինքն 1920 թ. մինչև 1955 թ.: Հեղինակը խոսում է 1695—1920 թթ. ընթացքում լույս տեսած՝ օտար պետություններում 49, ցարական Ռուսաստանում 25 և սովետական ժամանակաշրջանում 115 գլոբուսների, ատլասների և քարտեզների մասին: Հայ քարտեզագրական հրատարակությունները բոլորն Վերելք են ապրում միայն այն ժամանակ, երբ Հայաստանը Սովետական իշխանության օգնությամբ ձեռք է բերում քաղաքական անկախություն, ստեղծում է պետականություն, ընդարձակում է կուլտուրական, դպրոցական հիմնարկների ցանցը,

ստեղծում հրատարակչական լայն բազա: Բազմազան են դառնում քարտեզների տեսակները և աճում է տպագրանակը՝ հասնելով տասնյակ հազարների (ՍՍՌՄ պատմական քարտեզը Խարկովում հրատարակվել է 75000 օրինակից): Երրորդ մասում տրվում է հայ քարտեզագրական հրատարակությունների հետաքրքիր և մանրամասն վերլուծությունը, մի բան, որ առաջներում համարյա չի եղել, վերջապես չորրորդ մասում արդեն շոշափվում են սովետահայ քարտեզագրության առջև դրված խնդիրները:

Գիրքն ունի հավելվածներ, որտեղ բերված են այն երկրների ու քաղաքների ցուցակները, որտեղ եղել են հայ քարտեզագրական հրատարակությունները, այն հիմնարկների ու կազմակերպությունների ցուցակները, որոնք զբաղվել են քարտեզների հրատարակությամբ, ապա հեղինակների, կազմողների, քարտեզագիրների, գծագրողների, վիճագրողների, փորագրողների ազգանունները, ինչպես և օգտագործված գրականության ցանկը:

Տեղեկություններով, ծանոթություններով և իր վերլուծություններով հարուստ այս աշխատությունը ունի թերություններ, որոնց մասին անհրաժեշտ ենք համարում նշել, ցանկանալով օգնել հեղինակին ճշտելու, լրացնելու աշխատությունը երկրորդ հրատարակության ժամանակ:

Աշխատությունը կարիք ունի ավելի բովանդակալից և ընդարձակ նախաբանի: «Համատարած Աշխարհացույցի» լույս ընծայումը, զուգադիպում է այն ժամանակներին, երբ հոլանդական հայ գաղութը, Հոլանդիայի պատմաբանի խոսքերով «Ոսկյա էջ էր բաց անում Ամստերդամի քաղաքի գրքում»: Հայ գաղութին պատկանող առևտրական նավերը՝ «Հայաստանի վաճառական»-ը, «Պարսկաստանի վաճառական»-ը հոլանդական դրոշակներով, հոլանդական մարտանավերի պաշտպանությամբ լողում էին Ատլանտյան օվկիանոսից դեպի Միջերկրական ծովի ափերը, Ասյա, Չմյուռնիա, Պոլիս և այլն: Եվ բոլորովին պատահական չէ, որ 17-րդ դարում հոլանդական հայկական գաղութն էր, որ զարկ էր տալիս հայկական տպագրական և քարտեզագրական հրատարակություններին:

«Բանալի համատարած աշխարհացույցի» հեղինակները աշխատության առաջաբանում գրել են «Շահավետություն և պիտանիություն, որ աշխարհացույցին լառաջեգալի բայց, ևս քան զևս, պիտանանա վաճառականանաց՝ մանավանդ հայկազարմից, որք ի մեջ ասիական և արևելյան ազգաց ընդունելիք, և յոչ սակավուց սիրելիք, ընդամենայն աշխարհ գանքույթ երթեկություն անելով զամենայն երկիր առ ոտի հարկով հաճախեն վասն որո, ոչ ընդ վայր աշխատեմք ի շահ և յոգուտ մերազնեացդ-ի լույս ածելով զհամատարած աշխարհացույցն հայկական բառիվ և տառիվ որ է»: Այսպիսով հայ առևտրական դասակարգն էր առաջ մղում այն ժամանակվա հայկական միտքն ու կուլտուրան:

«Համատարած Աշխարհացույցի» լույս տեսնելուց 50 տարի հետո, ինչպես նշված է աշխատության մեջ, սկսվում է քարտեզների հրատարակումը արդեն Վենետիկում: 1746 թ. որպես հրատարակիչ հանդես է գալիս Իզնատիոս Սաչատրյանը «Երկիր ավետյաց», իսկ 1751 թվականին «Հայաստան աշխարհի ըստ նախնի աշխարհաց» քարտեզների հրատարակությամբ: Մի փոքր ընդհատումից հետո 1786—87 թվականներին որպես հեղինակ՝ հանդես է գալիս Եղիա Էնտազյանը իր «Ձորից մասանց աշխարհի» և «Օսմանյան պետության» քարտեզներով. մինչև այդ Էնտազյանը հայտնի էր հայ մատենա-

գրություն մեջ իր «Տետրակ օղապարիկ զնդոց» գրքով, որը լույս տեսավ 1785 թվականին: Խաչատրյանի և Էնտադյանի անունները սերտորեն կապվում են հայ քարտեզագրական հրատարակությունների սկզբնական շրջանի հետ և պետք է անպայման տեղավորված լինեն քննարկվող աշխատության մեջ: Այդ քարտեզների մասին հեղինակը հիշատակում է, բայց մոռացություն է տալիս հեղինակներին:

1881 թ. Վենետիկում կայացավ Համաշխարհային Աշխարհագրական Եր-րորդ ցուցահանդեսը, որին մասնակցեցին վենետիկյան միաթարյանները: Ցուցադրված աշխարհագրական գրքերի և քարտեզների ցուցակներից հայտ-նի է դառնում, որ որոշ թվով քարտեզներ չեն տեղավորվել քննարկվող աշ-խատության մեջ: Հիշենք մի քանիսը՝ «Օսմանյան պետության եվրոպական մասի» 1791 թ., «Ռուսի Հայաստան» 1828 թ., «Ռուսաստան» 1820 թ., «Նախնի Էլլադան (Հունաստան) և հատվածք հունաց» քարտեզները: Հատու-կագծերից ևս թվենք մի քանիսը՝ «Տեղացույց Աթենի», «Ծակատամարտին Սալամինայի», «Սարաթոնի նավամարտին», «Կիրճին Թերմոնիիլայի» և այլն:

Հեղինակը իր աշխատության մեջ հիշատակելով Ղ. Ալիշանի մեծածա-վալ աշխատությունների մեջ եղած քարտեզները, բաց է թողել 1802--16 թթ. հրատարակված Ագոնցի և Ինճիճյանի «Աշխարհագրություն Զորից մասանց աշխարհի» 12 հատորանոց գրքի, և 1857 թ. հրատարակված Ման-վել Քաջունու «Աշխարհագրություն հին և նոր Հայաստանի» գրքի, «համա-տարած» և «Հին Հայաստանի» քարտեզները, որոնք նույնպես կարևոր էին:

Վիեննայի միաբանության անդամ Ալեքսանդր Պալճյանը 1836 թ. պատրաստել և 1838 թ. հրատարակել է առաջին հայերեն գլոբուսը, որի մա-սին հեղինակը չի հիշատակում: Արսեն Այալնյանի կողմից 1845—46 թթ. հրատարակվել է «Նոր երկրագունդը» 60 սմ տրամագծով, հեղինակը հրատա-րակության տարին նշել է 1850 թ. և նույնը կրկնել է 1856 թ.:

Վիեննայի Միաթարյան միաբանության և Վիեննայի Աշխարհագրական ընկերության անդամ Աստվածատուր Ավագյանի 21 քարտեզներից բաղկա-ցած «Աշխարհացույց տախտակների» առաջին հրատարակությունը եղել է 1857 թ., իսկ երկրորդը 1860 թ.: Ընկ. Ստեփանյանը նշում է միայն 1860 թ. հրատարակությունը առանց հիշատակելու առաջինը: Հետաքրքիր է, որ Վիեն-նայում տպագրված «Ղրիմի» քարտեզը լույս է տեսել 6 լեզուներով, մինչդեռ հեղինակը նշում է միայն հայերենը և տաճկերենը:

1908 թվականից սկսած Պոլիսը հանդիսանում էր այն գլխավոր վայրը, որը մատակարարում էր քարտեզներ արևմտա-հայկական դպրոցներին, գլխավո-րապես աշխարհագրական դասագրքերում, սակայն հեղինակը այդ հանգա-մանքը հաշվի չի առել: Ընկ. Ստեփանյանը մոռացության է տվել հայտնի քարտեզագիր հեղինակ Ալեքսանդր Պիպերճյանի 1914 թ. հրատարակած «գրպանի նորագուն ատլասը» բաղկացած 80 էջից, որը պարունակում է քաղաքական, վիճակագրական և առևտրական տեղեկություններ, 24 գունա-վոր քարտեզներ, 9 տախտակ վիճակագրական տեղեկություններ և 3 տախ-տակ զանազան երկրների դրոշակներ: Նույն հեղինակի 1913 թ. «Քարտեզ օսմանյան պետության»-ը լրիվ չի հիշատակված, քարտեզին կից տպված է «Հայաստանի քարտեզը ըստ սեպածե արձանագրության» -ը, որին կցված է նաև 32 էջից բաղկացած վիճակագրական, վարչական, երկաթուղային տեղե-կություններ: Իդեալ պետք է շեշտել նաև այն հանգամանքը, որ աշխատու-

թյան մեջ տեղ չի գտել մի այնպիսի կարևոր քարտեզ որպիսին է «Նախա-
ուրարտյան Հայաստան և դրացի երկրներ»-ը, որը հրատարակված է Երեա-
նում 1933 թ. և կցված է «Հայաստանի սեպագիր շրջանի պատմություն»
աշխատությանը:

Սխալ է տեղադրված Հովհաննես Հակոբյանի հրատարակած «Անդրկով-
կասի պատմական քարտեզը», «Անդրկովկասի միանալը Ռուսաստանին»։ փո-
խանակ հրատարակության տարին ցույց տալու, ցույց է տրված 1938 թ.:

Մատնանշված թերություններով հանդերձ, գիրքը ունի կարևոր նշա-
նակություն և որպես հայ աշխարհագրական քարտեզների հրատարակու-
թյունների ամփոփման առաջին փորձ հայերեն քարտեզագրությամբ զբաղ-
վողների ու աշխարհագրագետների համար մնում է որպես մի կարևոր, ան-
հրաժեշտ աշխատություն:

Поступила 1 V 1958

